ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի հիմքում ընկած ուսումնասիրություններն իրականացվել են Sigrid Rausing Trust հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհի միջոցներով:

ԵՐԵՎԱՆ 2023

© 2023 | Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, Բն. 40

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am; mailbox@peacedialogue.am

URL: https://www.peacedialogue.am; https://safesoldiers.am/

ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի հիմքում ընկած ուսումնասիրություններն իրականացվել են Sigrid Rausing Trust հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհի միջոցներով:

ՀԵՂԻՆԱԿ՝ ՄԱՐՏԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ՝ ԷԼԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱԼԻՍ ԿԼԵՐ

ԽՄԲԱԳԻՐ՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԿԻՆ ՌԱՋՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 6
Միջազգային կարգավորումներ 6
Միջազգային մարդասիրական իրավունք 6
Մարդու իրավունքներին վերաբերող նորմատիվային միջազգային կարգավորումներ 8
Խորհրդատվական բնույթ ունեցող և մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող գործիքներ. 12
ՆԱԽԿԻՆ ՌԱՋՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ. 16
Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը. 16
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության փորձը. 18
Ֆրանսիական Հանրապետության փորձը. 19
Խորվաթիայի Հանրապետության փորձը. 20
Ավստրալիական Միության փորձը 20
ՆԱԽԿԻՆ ՌԱՋՄԱԳԵՐԻ ԵՋՐՈՒՅԹԸ ԵՎ ՌԱՋՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԿԸ 22
ԳԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՌԱՋՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 27
ՆԱԽԿԻՆ ՌԱՋՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 34
ՆԱԽԿԻՆ ՌԱՋՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ ԿՐԿԻՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՁԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ 37
Առաջարկություններ 44

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի ընթացքում գերեվարվել է մոտ 200 հայ (զինվորներ և խաղաղ բնակիչներ)[1]:

Բացի այդ, 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական ագրեսիայի ժամանակ գերեվարվել և նույն թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետություն է վերադարձվել 17 հայ զինծառայող[2]:

Ընդհանուր առմամբ՝ պատերազմից հետո իրականացվել է գերիների 22 խմբի վերադարձ, որոնցից 18-ը ՌԴ-ի, իսկ 4-ն՝ այլ երկրների ու կառույցների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ֆրանսիայի, Հունգարիայի, Վրաստանի միջնորդությամբ: ՌԴ-ի միջնորդությամբ գերությունից ազատվել է 111, վերոհիշյալ երկրների/կառույցների միջնորդությամբ՝ 39 հայ գերի[3]:

2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ (ՀՀ-ՌԴ-Ադրբեջան) հայտարարության 8-րդ կետը նախատեսում է ռազմագերիների, պատանդների և պահվող այլ անձանց ու մահացածների մարմինների փոխանակում՝ առանց լրուցուցիչ նախապայմանների:

Ժնևի երրորդ կոնվենցիայի 118-րդ հոդվածի համաձայն՝ ռազմագերիներն ազատվում և հայրենադարձվում են անմիջապես ռազմական գործողությունները դադարեցվելուց հետո:

Եթե անգամ ռազմագերիների վերադարձի մասին որևէ հիշատակում առկա չլիներ Եռակողմ հայտարարության մեջ, ապա ռազմական գործողությունների ավարտից հետո ռազմագերիներն, առանց որևէ խոչընդոտի, պետք է վերադարձվեին[4]:

Ադրբեջանի Հանրապետությունը ոչ բոլոր ռազմագերիներին է վերադարձրել, և մինչև օրս Ադրբեջանի Հանրապետությունում դեռևս պահվում է 33 հայ ռազմագերի[5]:

Թե՛ 2020 թվականի 44-օրյա պատերազմի, թե՛ 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի պատերազմի ժամանակ ադրբեջանական կողմը հայ ռազմագերիներին և քաղաքացիական անձնանց խոշտանգել է, սպանել և կատարել այլ դաժանություններ[6]:

Սա լրջագույն հումանիտար խնդիր է, որը պահանջում է համապարփակ դիտարկում և արձագանք քաղաքական մակարդակով:

Ռազմագերիները հայրենադարձվելուց հետո, օրենսդրական կարգավորումների բացերի և անհստակության հետևանքով, բախվում են

[1] Human Rights Violations during the 44-Day War in Artsakh, Fact-finding Report, Open Society Foundations-Armenia, 2022, p.104

[2] Տե՛ս՝ «Ամփոփ հաղորդում Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած գործունեության վերաբերյալ», էջ 29

[3] https://uic.am/15010?fbclid=IwAR0jq4_80Wk-mFCO2w3izsiSsMQloxwxFhca0Pdff6pwS9hqy8GQdTWKvh4

[4] Տե՛ս Ժնևի երրորդ կոնֆենցիայի 118-րդ հոդվածի 2-րդ պարբերություն

[5] http://parliament.am/draft_docs8/K-522_zekuyc.pdf

[6] https://ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf?fbclid=IwAR2OAjo6BxmRFaBSrtbXFqvSyXeM3M-5vZRFGpgCRCo4urVPVE2NPL_VO4g

բազմաթիվ խնդիրների, այդ թվում՝ պատշաճ բժշկական օգնություն, փոխհատուցում ստանալու, ինչպես նաև կրկին զինվորական ծառայության վերադառնալու հետ կապված:

Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի պատճառով և հետևանքով ռազմագերիները ձեռք են բերում ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական տարբեր տրավմաներ և վնասվածքներ: Դրանք թողնում են ծանր հետևանքներ, որոնցից ապաքինումը հնարավոր է միայն երկարաժամկետ և հետևողական բուժում ստանալուց հետո: Գերությունից հետո նրանց կյանքի որակը խիստ դեգրադացված է, իսկ մահացությունը՝ ավելի բարձր[7]:

Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ հայրենիք վերադարձած բազմաթիվ նախկին ռազմագերներ վերադարձել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, սակայն առողջական խնդիրների պատճառով արձակվել զինված ուժերի կազմից[8]:

Տարբեր ժամանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստեղծվել են առանձին մարմիններ գերիների հարցերով զբաղվելու համար, սակայն այդ մարմինների գործունեությունն ուղղված չի եղել գերությունից վերադարձած անձանց հարցերով զբաղվելուն[9,10]: Արդյունքում, երբևէ պետության կողմից անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել նախկին ռազմագերիների խնդիրներին, և համակարգային լուծումներ չեն տրվել:

Սույն զեկույցում ներկայացված են միջազգային իրավական ակտերը, որոնցով անհրաժեշտ է ղեկավարվել նախկին ռազմագերիների վերաբերյալ իրավակարգավորումներ սահմանելիս, ինչպես նաև նրանց իրավունքներն ապահովելու համար օրենքները կիրառելիս: Ուսումնասիրվել է նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների և դրանց կիրառման վերաբերյալ միջազգային փորձը:

Առաձին անդրադարձ է կատարվել այն հարցին, թե ովքեր կարող են համարվել նախկին ռազմագերի, վերլուծությամբ նշվել է ռազմական գործողությունների մասնակիցների շրջանակը: Քննարկվել են նախկին ռազմագերիների առողջության պահպանման և այլ իրավունքներ:

Ներկայացվել է նաև նախկին ռազմագերիներին առնչվող գործերի քննության վիճակը:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքում վեր են հանվել խնդիրներն ու ներկայացվել առաջարկություններ:

---

[7] Prisoners of war: long-term health outcomes, Robert J Ursano, The Lancet, December 2003 / The long-term implications of war captivity for mortality and health, Zahava Solomon, Talya Greene, Tsachi Ein-Dor, Gadi Zerach, Yael Benyamini, Avi Ohry, Springer media, October 6, 2013

[8] ՄԻՊ-ից ստացված տեղեկության համաձայն՝ 2022 թվականի սեպտեմբերի 13-14 մարտական գործողությունների ընթացքում գերեվարված 17 զինծառայողներից 13-ը ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար

[9] ՀՀ վարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1236-Ա որոշմամբ հաստատվել է գերիների, պատանդների եվ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը

[10] ՀՀ նախագահի 2000 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ՆՀ-693 հրամանագրով հաստատվել է «Գերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող հանժնաժողովի կանոնադրությունը»

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
(միջազգային իրավական ակտերի լույսի ներքո)

Քննարկվող ոլորտը կարգավորող իրավական ակտերը բազմաթիվ են թե՛ միջազգային, թե՛ ներպետական հարթություններում:

Սույն բաժնում վերոգրյալ հարցերի շրջանակը կքննարկվի՝ հիմք ընդունելով հետևյալ հաջորդականությունը.

- նախկին ռազմագերիների նկատմամբ ընդունելի վարվեցողության միջազգային կարգավորումները և դրանց շրջանակը,
- նախկին ռազմագերիների նկատմամբ ընդունելի վարվեցողության ներպետական կարգավորումները և դրանց շրջանակը:

Միջազգային կարգավորումներ

Միջազգային մարդասիրական իրավունք

Միջազգային մարդասիրական իրավունքի համակարգում ընդգրկված իրավական կարգավորումները թիրախավորում են զինված ընդհարումների ժամանակ մի խումբ անձանց իրավունքների պաշտպանությունը:

Ռազմագերիների, այդ թվում՝ նախկին ռազմագերիների իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ հիմնարար միջազգային իրավական փաստաթղթերը Ժնևյան 4 կոնվենցիաները և դրանց 2 լրացուցիչ արձանագրություններն են[11]: Այս կոնվենցիաները սահմանում են ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն չափորոշիչները,

[11] 1949 թվականի «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա (Առաջին կոնվենցիա),
1949 թվականի «Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» Ժնևյան կոնվենցիա (Երկրորդ կոնվենցիա),
1949 թվականի «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնևյան կոնվենցիա (Երրորդ կոնվենցիա, այսուհետ նաև՝ Կոնվենցիա),
1949 թվականի «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևյան կոնվենցիա (Չորրորդ կոնվենցիա),
1977 թվականի «Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների արձանագրություն» (Առաջին արձանագրություն),
1977 թվականի «Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների արձանագրություն» (Երկրորդ արձանագրություն),
2005 թվականի «Լրացուցիչ տարբերակիչ նշանի որդեգրման մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների արձանագրություն» (Երրորդ արձանագրություն):

ներառյալ պաշտպանությունը խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից: Կոնվենցիաները նաև պահանջում են պետություններից հետաքննել և հետապնդել Կոնվենցիաների ենթադրյալ խախտումները՝ ներառյալ ռազմագերիների նկատմամբ վատ վերաբերմունքը կամ խոշտանգումները:

Ռազմագերիների իրավունքների և դրանց պաշտպանության համատեքստում հիմնաքարային նշանակություն ունի Ժնևյան երրորդ կոնվենցիան: Քննարկելով ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի ընդունելի չափանիշները՝ Կոնվենցիան սահմանում է առնվազն հետևյալ պարտականությունները:

- Խտրականության բացակայություն. ռազմագերիները չպետք է խտրականության ենթարկվեն՝ ելնելով նրանց նախկին ռազմագերի կարգավիճակից:
- Հարգանք իրենց անձի նկատմամբ. ռազմագերիներին պետք է վերաբերվել մարդկայնորեն, հարգելով նրանց արժանապատվությունը և առանց որևէ բացասական տարբերակման:
- Բժշկական օգնություն. ռազմագերիներին պետք է անհրաժեշտության դեպքում ցուցաբերվի բժշկական օգնություն և ստանան իրենց առողջության համար պահանջվող ցանկացած բժշկական օգնություն:
- Համապատասխան սնունդ և կացության պայմաններ. ռազմագերիները պետք է ստանան համապատասխան սնունդ և կացարան:
- Արդարադատության մատչելիություն. ռազմագերիներին պետք է հասանելի լինի ցանկացած դատական գործընթաց, որը կարող է վերաբերել նրանց:
- Պաշտպանություն բռնությունից և հաշվեհարդարից. ռազմագերիները պետք է պաշտպանված լինեն բռնությունից, բռնության սպառնալիքներից և ցանկացած տեսակի հաշվեհարդարից:
- Հայրենադարձություն. ակտիվ ռազմական գործողությունների դադարեցումից հետո նախկին ռազմագերիները պետք է ազատ արձակվեն և հայրենադարձվեն առանց հապաղման[12,13]:
- Ոչ մի հայրենադարձված չի կարող ներգրավվել իսկական զինվորական ծառայության մեջ:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ռազմագերիները պետք է հայրենադարձվեն անմիջապես ռազմական գործողությունները դադարեցվելուց հետո:[14] Որոշակի հանգամանքների առկայության դեպքում, սակայն, հայրենադարձությունը կարող է տեղի ունենալ նաև ավելի վաղ (անձի առողջական վիճակը, կողմերի միջև առկա հատուկ համաձայնությունները և այլն):

[12] Ժնևյան երրորդ կոնվենցիա, հոդված 3, 5, 118, Ժնևյան 4-րդ կոնվենցիա հոդված 12-14:
[13] Հարկ է նկատել, որ նախկին ռազմագերի եզրույթը Ժնևյան կոնվենցիաներում գործածված չէ: Սակայն պետք է հաշվի առնել, որ ժնևյան կոնվենցիաները կիրառվում են այն պահից սկսած, երբ նրանք կընկնեն հակառակորդի իշխանության տակ, և ընդհուպ մինչև նրանց ազատումը և հայրենադարձումը: Հետևաբար՝ այն բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ սույն հետազոտության շրջանակում նշվածները, քննարկվող ողջ ժամանակահատվածի համար կիրառելի են: Միևնույն ժամանակ, ռազմագերիների հայրենադարձումը երբևէ չի նշանակում, որ վերջիններս այլևս ենթակա չեն պաշտպանության: Այդ պարագայում, արդեն, կարելի է պնդել, որ անձինք ենթակա են պաշտպանության մարդու իրավունքների համատեքստում:
[14] Ժնևյան 3-րդ կոնվենցիա, հոդված 129:

peace DIALOGUE EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY SIGRID RAUSING TRUST

Կոնվենցիան ուղղակի արգելք է նախատեսում ռազմագերիների նկատմամբ խոշտանգման կամ անմարդկային վարվելակերպի, սպանության, լուրջ խեղում պատճառելու և նմանատիպ այլ լուրջ խախտումների համար: Այն ոչ միայն արգելում է այդ գործողությունները, այլև պարտավորեցնում անդամ պետություններին գործողության մեջ դնել այնպիսի օրենսդրություն, որը թույլ կտա ապահովել քրեական պատիժների արդյունավետ համակարգ թվարկված արարքները կատարած անձանց նկատմամբ[15]:

Մեջբերված կարգավորումները կիրառելի են բոլոր ռազմագերիների նկատմամբ, անկախ վերջիններիս գերության ներքո հայտնվելու կոնկրետ դեպքի առանձնահատկություններից: Դրանք կոչված են ապահովելու, որ նախկին ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքը լինի մարդկային և արժանապատիվ, և որ նրանք ստանան անհրաժեշտ բժշկական օգնություն և ուշադրություն, որը բխում է վերջիններիս վիճակից:

Հատկանշական է, որ սա այն ուղենիշն է, որը հետագայում հիմք է ընդունվել մի շարք պետությունների ներպետական օրենսդրության մշակման հարցում՝ նպատակ հետապնդելով երաշխավորել նախկին ռազմագերիների իրավունքների արդյունավետ պաշտպանություն:

Մարդու իրավունքներին վերաբերող նորմատիվային միջազգային կարգավորումներ

Նախկին ռազմագերիների իրավունքների և այդ համատեքստում հանրային իշխանության պարտականությունների ցանկը, սակայն, չի սահմանափակվում բացառապես միջազգային մարդասիրական իրավունքի կարգավորումներով:

Մասնավորապես՝ նախկին ռազմագերիները շարունակում են օգտվել նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա կարգավորումներով նրանց տրամադրված երաշխիքներից:

Նշված պնդման հիմքն է այն, որ անձինք, անկախ նրանց կարգավիճակից եւ նրանց նկատմամբ կիրառելի հատուկ կարգավորումից, շարունակում են օգտվել առնվազն այն նվազագույն երաշխիքներից, որոնք տրամադրում են մարդու իրավունքների միջազգային և ներպետական կարգավորումները: Այս շրջանակը անպայմանորեն ներառում է կյանքի իրավունքի պաշտպանությունը, պաշտպանությունը խոշտանգումից, դաժան կամ անմարդկային վերաբերմունքից, խտրականությունից՝ հաշվի առնելով ռազմագերիների խոցելիությունը:

Այս համատեքստում պարտադիր հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ նախկին ռազմագերիները կարող էին ենթարկվել վատ վերաբերմունքի գերության մեջ գտնվելու ընթացքում: Հետևաբար՝ ինչպես միջազգային կարգավորումներն, այնպես էլ այլ պետությունների փորձը ցույց է տալիս, որ նախկին ռազմագերիներին տրամադրվում է տարաբնույթ աջակցություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է պնդել, որ մարդու իրավունքներին վերաբերող նորմատիվային կարգավորումները էական նշանակություն ունեն նախկին ռազմագերիների պաշտպանության հարցում:

[15] Կոնվենցիա, հոդվածներ 129 և 130:

Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիա

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիայի իմաստով խոշտանգումը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Այս շրջանակը չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց[16]:

Քննարկվող կոնվենցիան ուղղակիորեն պարտավորեցնում է անդամ պետություններին ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար[17]:

Նախկին ռազմագերիների նկատմամբ այս կոնվենցիայի կիրառելիությունը քննարկելիս հարկ է հատկապես ուշադրություն դարձնել կարգավորմանը, համաձայն որի ոչ մի բացառիկ հանգամանք, այդ թվում՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգման արդարացում[18]:

Նույն համատեքստում առանձին կարևություն ունի նաև այն կարգավորումը, համաձայն որի՝ յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ[19]: Այս համատեքստում, հաշվի առնելով խոշտանգումների բացարձակ արգելքը, կարելի է պնդել, որ նախկին ռազմագերիների նկատմամբ առկա չէ կոնվենցիոն դրույթի կիրառման սահմանափակում: Հանրային իշխանությունը, հետեւաբար, պարտավոր է ձեռնարկել իր իրավասության ներքո գտնվող բոլոր քայլերը՝ համապատասխան քննություն երաշխավորելու ուղղությամբ:

[16] Հոդված 1
[17] Հոդված 2
[18] Հոդված 2
[19] Հոդված 4

Եվրոպայի խորհրդի կողմից 1950 թվականին ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա»

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության իրավական կարգավորումների շրջանակում իր առանձնահատուկ դերն ունի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ): Այս հիմնարար փաստաթուղթը, զարգացնելով մարդու իրավունքների պաշտպանության դերն ու նշանակությունը, ինչպես նաև անձանց օժտելով իրենց խախտված իրավունքները վերականգնելու գործնական հնարավորությամբ, որոշակիորեն վերաբերում է նաև նախկին ռազմագերիներին: Մասնավորապես՝ նման հետևության հիմքն է հանդիսանում փաստարկը, որ անհիմն է այն պնդումը, թե մարդու իրավունքների ոլորտին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերը ռազմագերիներին վերաբերելի չեն:

ՄԻԵԿ-ն ուղղակիորեն սահմանում է դրան մասնակցող պետությունների պոզիտիվ պարտականությունը իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են դրանում: Հետևաբար՝ այն բոլոր դեպքերում, երբ մարդու իրավունքների խախտումները վերաբերում են նախկին ռազմագերիներին, ՄԻԵԿ-ը ևս կիրառելի իրավական կարգավորում է:

Հատկանշական է, որ ՄԻԵԿ համակարգում նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցեր քննարկելիս պայմանականորեն կարելի է առանձնացնել երկու վերաբերելի կարգավորում: Առաջինը կյանքի իրավունքին առնչվող կարգավորումներն են[20,21]: Այս առնչությամբ պետություններն ունեն պատշաճ քննության իրականացման պոզիտիվ պարտականություն[22]: Նշված դրույթը կարող է կիրառելի լինել այն դեպքերում, երբ նախկին ռազմագերիները մահանում են գերության ընթացքում խոշտանգումների ենթարկված լինելու պատճառով:

Երկրորդ վերաբերելի կարգավորումը խոշտանգման արգելքն է[23]: Խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի առնչությամբ ՄԻԵԿ իրավունքը որդեգրել է միանշանակ մոտեցում. այն է՝ խոշտանգումն արգելված է բոլոր դեպքերում[24]: Այս մոտեցումը բազմիցս վերահաստատվել է

---

[20] ՄԻԵԿ, հոդված 2:

[21] ՄԻԵԴ, Ալ-Սկեինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 7 հուլիս 2011, գանգատ թիվ 55721/07, Ջալուդն ընդդեմ Նիդերլանդների, 20 նոյեմբեր 2014, գանգատ թիվ 47708/08, Մքկանն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 27 սեպտեմբեր 1995, գանգատ թիվ 18984/91, Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի, 6 հուլիս 1995, գանգատներ թիվ 43577/98 և 43579/98, Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի, հուլիս 1998, գանգատ թիվ 21593/93, Էրգին ընդդեմ Թուրքիայի, հուլիս 1998, գանգատ թիվ 23818/94, Ահմետ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի, 6 ապրիլ 2004, գանգատ թիվ 21689/93:

[22] ՄԻԵԴ, Կայան ընդդեմ Թուրքիայի, 19 փետրվար 1998, Տանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի, հուլիս 1999, գանգատ թիվ 23763/94, Խաշիևը և Ակաևան ընդդեմ Ռուսաստանի, փետրվար 2005, գանգատներ թիվ 57942/00 և 57945/00, Մուսաևը և այլք ընդդեմ Ռուսաստանի, հուլիս 2007, գանգատներ թիվ 57941/00, 58699/00 և 60403/00:

[23] ՄԻԵԿ, հոդված 3:

[24] ՄԻԵԴ, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության, 20 մարտ 2018, գանգատ թիվ 5310/71, Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի, 28 հուլիս 1999, գանգատ թիվ 25803/94, Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության, 15 նոյեմբեր 1996, գանգատ թիվ 22414/93, Ակսոյն ընդդեմ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ծավալուն նախադեպային պրակտիկայում:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավական այս կարգավորումների համատեքստում առկա է ՄԻԵԿ մասնակից պետություններին ուղղված հստակ պահանջ՝ խոշտանգման, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի դեպքերում իրականացնել պատշաճ քննություն: Այս կարգավորումը հավասարապես վերաբերում է նախկին ռազմագերիներին ևս:

Ընդ որում՝ խոշտանգման բոլոր դեպքերում պատշաճ քննություն իրականացնելու պետության պարտականությունը հավասարապես վերաբերում է թե՛ այն դեպքերին, երբ ենթադրյալ արարքը կատարվել է հանրային իշխանության ներկայացուցչի կողմից, թե՛ այն դեպքերին, երբ ենթադրյալ արարքը կատարվել է մասնավոր անձի կողմից[25]:

ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ խոշտանգումների դեպքում քննությունը պետք է իրականացվի պատշաճ, համապարփակ, անկախ և անաչառ կերպով: Քննությունը պետք է հնարավորություն տա նույնականացնել և պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Միևնույն ժամանակ, իրականացվող քննությունը պետք է թույլ տա տուժողին հայցել և ստանալ հատուցում[26]:

Իրականացված քննության արդյունավետությունը կարող է որոշվել ուսումնասիրելով ամեն գործն առանձնացված կերպով՝ հաշվի առնելով դրա բնույթը, մեղադրանքի լրջությունը, հանրային իշխանության կողմից ձեռնարկված քայլերը, ինչպես նաև քննության արդյունքները:

Հետևաբար՝ ՄԻԵԿ-ը վերաբերելի է նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանությանը և երաշխավորմանը, քանի որ վերջիններս օգտվում են իրավունքների և երաշխիքների նույն ընդհանուր ծավալից, ինչ այլ անձինք: ՄԻԵԿ-ն ունի ուղղակի կարգավորումներ և դրանց հիման վրա ձևավորված հստակ նախադեպային պրակտիկա, որն արգելում է խոշտանգումը, դաժան կամ անմարդկային վերաբերմունքը և կամայական ազատազրկումները, որոնք առանձնահատուկ կերպով վերաբերելի են ռազմագերիներին: ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան պարտավորեցնում է պետություններին իրականացնել պատշաճ քննություն խոշտանգման կամ այլ անմարդկային վերաբերմունքի բոլոր դեպքերում:

Թուրքիայի, 18 դեկտեմբեր 1996, գանգատ թիվ 21987/93, Սոյերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության, 7 հուլիս 1989, գանգատ թիվ 14038/88:

[25] ՄԻԵԴ, Ակսոյն ընդդեմ Թուրքիայի, 18 դեկտեմբեր 1996, գանգատ թիվ 21987/93:

[26] ՄԻԵԴ, Ասսենովն ու այլք ընդդեմ Բուլղարիայի, 10 հուլիս 1997, գանգատ թիվ 24760/94:

Խորհրդատվական բնույթ ունեցող և մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող գործիքներ

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության և փաստաթղթավորման ձեռնարկ» (այսուհետ՝ Ստամբուլյան արձանագրություն)

Ստամբուլյան արձանագրությունը միջազգային ուղեցույցների շարք է, որը նախանշում է խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերում պատշաճ քննության իրականացման և փաստաթղթավորման կանոնները: Այն մշակվել է 1999 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից և ունի լայն կիրառում բժշկական և իրավաբանական ոլորտի ներկայացուցիչների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, հանրային իշխանության ներկայացուցիչների շրջանում: Դրա նպատակն է երաշխավորել, որ խոշտանգման ենթադրյալ դեպքերը ենթարկվում են պատշաճ քննության և տուժողները ստանում են անհրաժեշտ բժշկական օգնություն:

Ստամբուլյան արձանագրությունը պարունակում է ծավալուն նկարագիր՝ ինչպես փաստաթղթավորել խոշտանգման ֆիզիկական կամ հոգեբանական ցուցիչները, ներառյալ՝ տուժողների հարցաքննություն, բժշկական հետազոտությունների իրականացում, փորձաքննության համար անհրաժեշտ նյութերի ստացում և այլն: Այն նաև նախանշում է իրավական և էթիկական սկզբունքները, որոնք պետք է ղեկավար և ելակետային լինեն խոշտանգման վերաբերյալ քննություն իրականացնող անձանց համար՝ ներկայացնելով նաև առաջարկներ անմարդկային վերաբերմունքի ենթարկված անձանց բժշկական և հոգեբանական աջակցություն տրամադրելու առնչությամբ:

Թեպետ Ստամբուլյան արձանագրությունը պարտադիր իրավաբանական ուժ չունի, այն լայնորեն ճանաչված և ընդունված է որպես հեղինակավոր ուղեցույց: Դրա սկզբունքները հաճախ իրենց արտացոլումն են գտել ներպետական օրենսդրություններում:

Մասնավորապես՝ Ստամբուլյան արձանագրության կարգավորումները հիմք են հանդիսացել Մեքսիկայի, Նեպալի, Արգենտինայի, Հարավային Աֆրիկայի և այլ պետությունների՝ խոշտանգումների առնչությամբ օրենսդրությունը մշակելու համար:

Ընդհանրացնելով Ստամբուլյան արձանագրության բովանդակությունը՝ կարելի է պնդել, որ այն նպատակ է հետապնդում կարգավորել հետևյալ հարաբերությունները.

- Խոշտանգման, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի արգելք: Այս սկզբունքը նախատեսում է խոշտանգման արգելքը ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ մարդասիրական իրավունքի համատեքստում[27]:
- Փաստաթղթավորման իրավունքը և կարևորությունը: Այս սկզբունքն ընդգծում է խոշտանգման վերաբերյալ հաղորդումների քննության ընթացքի փաստաթղթավորման կարևորությունը[28]:
- Բժշկական ոլորտի մասնագետների դերը: Քննարկվող հատվածը վերաբերում է բժշկական անձնակազմի կարևորությանը, նրանց կողմից գաղտնիության պահպանմանը, օբյեկտիվությամբ և անաչառությամբ առաջնորդվելը[29]:
- Խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումների քննությունը: Ստամբուլյան արձանագրության այս հատվածն ընդգծում է պատշաճ, համապարփակ և անաչառ քննության իրականացման կարևորությունը: Այս հաղորդումների քննության համար Ստամբուլյան արձանագրությունն առանձնացնում է հետևյալ հիմնական սկզբունքները՝ օբյեկտիվություն, անաչառություն, համակողմանիություն, ողջամիտ ժամկետում քննության իրականացում, գաղտնիություն, անկախություն, արհեստավարժություն, ներառականություն, թափանցիկություն[30]:
- Փոխհատուցման և ռեաբիլիտացիայի տրամադրումը: Այս սկզբունքն ընդգծում է դրանց կարևորությունը խոշտանգումից տուժած անձանց համար՝ առանձնացնելով բժշկական օգնություն, հատուցում և այլ աջակցություն ստանալու կարևորությունը[31]:
- Միջազգային համագործակցության կարևորությունը: Այս սկզբունքը շեշտադրում է միջազգային համագործակցության կարևորությունը՝ ուղղված խոշտանգման կանխմանը, ինչպես նաև արդեն իսկ տեղի ունեցած դեպքերով համագործակցությանը, օրինակ՝ տեղեկատվության կամ փորձի փոխանակման համատեքստում[32]:

Ստամբուլյան արձանագրությունը, թեև հիմնականում նախատեսված է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի փաստագրմանն ու հետաքննությանը աջակցելու համար, կիրառելի է նաև նախկին ռազմագերիների իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով: Նշվածը պայմանավորված է նրանով, որ նախկին ռազմագերիները համարվում են հատկապես խոցելի խոշտանգումների և դաժան վերաբերմունքի նկատմամբ, հատկապես՝ անազատության մեջ գտնվելու ընթացքում և անմիջապես հետո: Ստամբուլյան արձանագրության սկզբունքները, ներառյալ խոշտանգումների և դաժան

[27] Ստամբուլյան արձանագրություն, մաս B.2:
[28] Ստամբուլյան արձանագրություն, մաս C:
[29] Ստամբուլյան արձանագրություն, մասեր C.1.3., C.2.:
[30] Ստամբուլյան արձանագրություն, մասեր D.1, D.2., D.4:
[31] Ստամբուլյան արձանագրություն, մասեր D.3.1., D.3.3.:
[32] Ստամբուլյան արձանագրություն, մասեր E.1., E.2.:

վերաբերմունքի արգելումը, փաստաթղթավորման վերաբերյալ դրույթները, բժշկական անձնակազմի դերը, հաղորդումների քննությունը, փոխհատուցման և վերականգնման ապահովումը և միջազգային համագործակցության կարևորությունը ունեն առանցքային նշանակություն: Հետևաբար, Ստամբուլյան արձանագրությունը կարող է արժեքավոր գործիք լինել նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանության և խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ ցանկացած դեպքի արագ և արդյունավետ լուծում ապահովելու համար:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության համաժողովի 1994 թվականի «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ» վարքագծի կանոններ

Քննարկելով նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանության ոլորտում նշանակություն ունեցող փաստաթղթերը՝ հարկ է անդրադառնալ նաև «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ» վարքագծի կանոններին:

Թեպետ այս փաստաթուղթն ուղղակիորեն չի մատնանշում «նախկին ռազմագերի» եզրույթը, այնուամենայնիվ վերաբերում է անվտանգության ոլորտում պարտականությունների պատշաճ կատարմանը: Միանշանակ է, որ անվտանգության ոլորտին առնչվող կառուցակարգային քննարկումները թերի կլինեն, եթե դրանցում անդրադարձ կատարված չէ անմիջականորեն այն անձանց, ովքեր ստանձնել են այս պատասխանատվությունը:

Քննարկվող փաստաթղթով մասնակից պետությունները պարտավորվել են ապահովել, որպեսզի ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերի անձնակազմերի ներկայացուցիչներն օգտվեն թե՛ ԵԱՀԿ փաստաթղթերում, թե՛ միջազգային իրավունքի նորմերում ամրագրված մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից՝ համաձայն սահմանադրական կարգավորումների և ծառայության պահանջների[33]:

Այս փաստաթուղթը ևս մեկ վկայությունն է նրա, որ նախկին ռազմագերիները (անձինք, ովքեր ռազմական ծառայություն իրականացնելիս հայտնվել են գերության մեջ, ապա՝ հայրենադարձվել) պետք է ունենան գործուն հնարավորություն օգտվելու և իրացնելու իրենց իրավունքները և հիմնարար ազատությունները: Ընդ որում՝ վերջիններիս նախկին ռազմագերի հանդիսանալու հանգամանքը որևէ կերպ չպետք է և չի կարող մեկնաբանվել որպես անհրաժեշտ և բավարար պատճառաբանություն՝ իրավունքների և ազատությունների այդ շրջանակից նահանջն արդարարացնելու կապակցությամբ:

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի 2010 թվականի թիվ 4 հանձնարարական

Հանձնարարականի 11 և 12-րդ կետերի համաձայն՝ այն դեպքերում, երբ զինծառայողները բարձրացնում են վիճելի պնդում առ այն, որ ենթարկվել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտող գործողությունների, կամ երբ

[33] «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ» վարքագծի կանոններ, կետ 32:

իշխանությունները ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու, որ այդպիսի վերաբերմունք տեղի է ունեցել, ապա անհապաղ պետք է սկսվի այդ հանգամանքների անկախ և արդյունավետ պաշտոնական քննություն:

Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինծառայողների խոշտանգումների և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումների ներկայացումը խրախուսելու և այդպիսի գործողությունների մասին հաղորդում ներկայացրած անձին հաշվեհարդարից պաշտպանելու համար:

Նույն հանձնարարականի 50-րդ կետի համաձայն՝ նախկին և ծառայության մեջ գտնվող զինծառայողների համար իրենց անձնական տվյալները, այդ թվում բժշկական փաստաթղթերը պետք է լինեն հասանելի՝ ըստ պահանջի:

51-րդ կետի համաձայն՝ ծառայության մեջ գտնվող և (անհրաժեշտության դեպքում) նախկին զինծառայողներին պետք է հասանելի լինի տեղեկատվությունն այն իրավիճակների վերաբերյալ, որոնք անցյալում վտանգավոր են եղել կամ ներկայում պոտենցիալ կերպով վտանգավոր են նրանց առողջության համար:

73-րդ կետի համաձայն՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ ստացած վիրավորման կամ դրա հետևանքով առաջացած հիվանդությունների պատճառով ծառայությունը թողնող զինծառայողների համար պետք է գործի պատշաճ փոխհատուցման համակարգ:

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ[34]

«Նախկին ռազմագերու» կարգավիճակն իր ամրագրումն է ստացել որոշ պետությունների ներպետական օրենսդրությամբ ևս: Այս բաժինը նպատակ է հետապնդում քննարկել այդ կարգավիճակի ներքո գտնվող անձանց իրավունքների պաշտպանությունը: Մեծապես նման կարգավիճակի առանձին սահմանումը կամ նման սահմանման բացակայության պարագայում նախկինում ռազմագերու կարգավիճակ ունեցած անձանց որոշակի հավելյալ երաշխիքների տրամադրումը նպատակ է հետապնդում գործնականում պաշտպանել այս խոցելի խմբի իրավունքները և հիմնարար ազատությունները:

Արտոնությունները, որոնք տրամադրվում են նախկին ռազմագերիներին, հիմնականում վերաբերում են վերջիններիս համար բժշկական ծառայություններն առավել հասանելի դարձնելուն, նրանց և նրանց ընտանիքներին ֆինանսական աջակցություն տրամադրելուն, այդ անձանց նկատմամբ խտրականությունը բացառելուն[35]:

Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը

ԱՄՆ-ն նախկին ռազմագերիներին տրամադրում է մի շարք առավելություններ և մշակել է աջակցության հստակ համակարգ: Թիրախային ոլորտներն են առողջությունը, հաշմանդամություն ունեցող նախկին ռազմագերիներին հատուցումների տրամադրումը և այլն: Նախկին ռազմագերիների վերաբերյալ օրենսդրությունը հիմնված է ճանաչման, հարգանքի և աջակցության սկզբունքների վրա: Վետերանների գործերով վարչությունը (անգլերեն՝ the Department of Veterans Affairs) պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված այդ օրենսդրության ներդրման գնահատմանը:

ԱՄՆ-ում իրականացվել են ծավալուն հետազոտություններ՝ նպատակ հետապնդելով բացահայտել նախկին ռազմագերիների հետ վարվեցողության լավագույն կանոնները: Քննարկվող ռազմագերիները մասնակցություն էին ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմում, Կորեական և Վիետնամի պատերազմներում: ԱՄՆ իշխանությունները 2015 թվականին հիմնել են Ռազմագերիների և անհետ կորած անձանց հարցերով զբաղվող հանձնաժողով (անգլերեն՝ POW/MIA Accounting Command).

Թեպետ ուղղակի օրենսդրական արգելք նախատեսված չէ, և նախկին ռազմագերիները տեսականորեն կարող են վերադառնալ զինվորական

[34] Ուսումնասիրված փորձը սպառիչ չէ:

[35] Ի տարբերություն Խորվաթիայի Հանրապետության, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Ֆրանսիայում որպես այդպիսին «նախկին ռազմագերու» առանձին, ուղղակի սահմանում կամ կարգավիճակ նախատեսված չէ: Այս խումբ անձանց, օրինակ ԱՄՆ-ում, վերաբերվում են գրեթե նույն կանոններով, ինչ վետերաններին:

ծառայության, այնուամենայնիվ, առկա են խիստ կանոններ և նախապայմաններ: Ընդհանուր առմամբ՝ գործնական այդպիսի դեպքեր հազվադեպ են հանդիպում:

Հարկ է նկատել, որ նախկին ռազմագերիների համար զինվորական ծառայության վերադառնալու առանձին կարգավորումներ նախատեսված չեն: Առկա իրավակարգավորումներն ունեն ընդհանուր բնույթ զինված ուժերին միանալու կամ կրկին միանալու ցանկություն ունեցող անձանց համար: Այս հատկանիշների ցանկում կարևորվում են անձի որակավորումը, արդյունավետությունը, ֆիզիկական վիճակը, ինչպես նաև տարիքը՝ 17-ից մինչև 42 տարեկան[36]:

Մեկ այլ վերաբերելի կարգավորում է ԱՄՆ Պաշտպանության նախարարության 6130.03 հրահանգը (հապավումը՝ DoDI), որն առավել մանրամասն է շարադրում ֆիզիկական և հոգեկան առողջությանը վերաբերող չափանիշները, որոնց պետք է համապատասխանի զինվորական ծառայության անցնող յուրաքանչյուր ոք[37]:

Եթե նախկին ռազմագերիները գերության մեջ գտնվելու ընթացքում ենթարկվել են խոշտանգման, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի, ապա պետությունն ունի պարտականություն իրականացնելու պատշաճ քննություն: Քննության իրականացմանը զուգահեռ գործում են նաև այն աջակցող միջոցները, որոնք նախատեսված են օրենսդրությամբ:

Անդրադառնալով նախկին ռազմագերիների նկատմամբ կիրառելի օրենսդրությանը՝ կարելի է առանձնացնել 2003 թվականի Վետերանների նպաստների մասին, Միասնական ծառայությունների զբաղվածության և վերաշխատանքի իրավունքի մասին, 1974 թվականի Վիետնամի դարաշրջանի վետերանների վերակարգավորման աջակցության ակտերը:

Անդրադառնալով 2003 թվականի Վետերանների նպաստների մասին ակտին՝ հարկ է նկատել, օրինակ, որ այն վետերաններին առաջարկում է առողջապահական ծառայություններ, հաշմանդամություն ունեցող վետերանների համար նախատեսված է դրամական հատուցում, առանձին կերպով սահմանում է կրթական ծրագրեր նրանց համար, ինչպես նաև նախանշում է ռազմագերիների և անհետ կորած անձանց հարցերով զբաղվող մարմնի ստեղծման հիմքը[38]:

Առանձին քննարկման է արժանի նաև 1974 թվականի Վիետնամի դարաշրջանի վետերանների վերակարգավորման աջակցության ակտը, որի որդեգրած սկզբունքներին համաձայն, դաշնային կապալառուներին և ենթակապալառուներին խրախուսվում է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան աշխատանքի ընդունել վետերանների: Դաշնային կապալառուները և ենթակապալառուները պարտավորվում են տարեկան կտրվածքով հաշվետվություն ներկայացնել իրենց վետերան հանդիսացող աշխատակիցների առնչությամբ: Այս օրենսդրական փաստաթուղթը նաև սահմանում է, որ վետերաններն իրավունք ունեն կրկին աշխատանքի անցնել

[36]Title 10 of the United States Code, Section 505. Հղումը՝ https://www.law.cornell.edu/uscode/text/10/505#:~:text=No%20enlisted%20member%20is%20entitled,of%20the%20member's%20current%20enlistment:

[37]Կարգավորման հղումը՝ https://www.federalregister.gov/documents/2015/03/27/2015-06909/qualification-standards-for-enlistment-appointment-and-induction:

[38]Հղումը՝ https://www.govinfo.gov/content/pkg/PLAW-108publ183/pdf/PLAW-108publ183.pdf :

այն պետական հաստատությունում, որտեղ աշխատել են նախքան զինվորական ծառայության անցնելը[39]:

Այս կարգավորումների շրջանակում իր ուրույն տեղն ունի 1981 թվականի Նախկին ռազմագերիներին տրվող առավելությունների ակտը, որով սահմանվում են, ի թիվս այլնի, ամսական հատկացումներ, որոնց շահառուները կարող են հանդիսանալ զինված ընդհարումների կոնկրետ փուլերում գերության մեջ հայտնված անձինք:

Առավել մանրամասն անդրադառնալով այս կարգավորմանը՝ կարևոր է առանձնացնել հետևյալը. որպեսզի անձը կարողանա ստանալ այս կարգավորմամբ նախատեսված առավելությունները, անհրաժեշտ նախապայման է, որ վերջինս ռազմական գործողությունների ընթացքում գերության մեջ գտնված լինի հակառակորդ ուժի մոտ: Փոխհատուցումների ստացման առնչությամբ անհրաժեշտ է հիմնավորելը, որ անձի մոտ առկա հաշմանդամությունն ուղղակիորեն պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում ռազմական ծառայության հետ[40]:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության փորձը

Մեծ Բրիտանիան ևս մշակել և ընդունել է մի շարք իրավական կարգավորումներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել նախկին ռազմագերիների իրավունքները և հիմնարար ազատությունները: Այս իրավական ակտերը հիմնված են արդարության, հարգանքի և ճանաչման սկզբունքների վրա:

Մեծ Բրիտանիան ևս նախկին ռազմագերիներին տրամադրում է բժշկական աջակցություն, հատուցումներ և փոխհատուցումներ, ինչպես նաև միջոցներ վերջիններիս սոցիալական բարեկեցությունն ապահովելու համար: Այստեղ իրականացվում են մի շարք միջոցառումներ ռազմագերիների ավանդը ճանաչելու և հարգելու ուղղությամբ, օրինակ՝ Ռազմագերիների հիշատակի օր:

Քննարկվող դեպքում առկա չէ միանշանակ արգելք նախկին ռազմագերիների՝ զինվորական ծառայության վերադառնալու կապակցությամբ: Ամեն դեպքում, վերջիններս պետք է համապատասխանեն մի շարք որակավորումների: Գործնականում, խիստ հազվադեպ են նախկին ռազմագերիների՝ զինվորական ծառայության վերադարձի դեպքերը:

Ինչպես և ԱՄՆ պարագայում, Մեծ Բրիտանիայում ևս առանձնացված մոտեցում առկա չէ նախկին ռազմագերիների և այլ անձանց՝ զինվորական ծառայության անցնելու կամ կրկին անցնելու առնչությամբ: Քննարկվող չափանիշների թվում են անձի տարիքը (մինչև 45 տարեկան), առողջական վիճակը, նախկինում զինծառայող հանդիսանալու պարագայում՝ վերջինիս մասին առկա տեղեկատվությունը, դատվածություն ունենալու հանգամանքը, քաղաքացիությունը (անհրաժեշտ է ՄԲ քաղաքացիություն), ֆիզիկական և հոգեկան վիճակը: Հատկանշական է, որ Մեծ Բրիտանիայում կրկին

[39]Հղումները՝ https://www.law.cornell.edu/uscode/text/38/4212, https://www.dol.gov/agencies/vets, https://www.opm.gov/policy-data-oversight/veterans-services/:
[40]Title 38 of the United States Code, sections 1501-1562, հղումը՝ https://www.law.cornell.edu/uscode/text/38/1562?quicksearch=38&quicksearch=1501:

զինծառայության անցնելը երաշխավորված չէ և ամեն դեպքում որոշումը կայացվում է՝ հաշվի առնելով տվյալ անձի առանձնահատկությունները[41]:

Դիտարկելով խնդրո առարկայի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը՝ հարկ է առանձնացնել 2011 թվականի Զինված ուժերի (հատուցման սխեմաների) օրդերը, 2015 թվականի Զինված ուժերում կենսաթոշակային սխեմայի օրդերը, ինչպես նաև Պատերազմական կենսաթոշակների սխեմաների օրդերը:

Եթե նախկին ռազմագերին ենթարկվել է խոշտանգման, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի, վերջինս կարող է ստանալ հատուցում և/կամ այլ աջակցություն՝ օրենքով սահմանված ընթացակարգով:

Ֆրանսիական Հանրապետության փորձը

Ֆրանսիայում ևս որոշ առավելություններ և օրենսդրական մեխանիզմներ են առկա նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանության կապակցությամբ: Այստեղ ևս որդեգրված մոտեցումների սկզբունքային հիմքն են հանդիսանում արժանապատվությունը, ճանաչումը և աջակցությունը:

Ֆրանսիան իր հերթին քննություն է իրականացրել՝ պարզելու Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ռազմագերիների նկատմամբ վարվեցողությունը, նրանց իրավունքների խախտումները: Այստեղ գործում է Մարդու իրավունքների ազգային խորհրդատվական հանձնաժողովը, որը կոչված է քննություն իրականացնել մարդու իրավունքների խախտումների դեպքերով. բացառություն չեն նաև նախկին ռազմագերիներին առնչվող դեպքերը:

Թեպետ ուղղակի արգելք նախատեսված չէ նախկին ռազմագերիների՝ զինվորական ծառայության վերադառնալու համար, սակայն նրանք պետք է բավարարեն մի շարք չափանիշների: Նման դեպքերը հազվադեպ են:

Ֆրանսիայում զինվորական ծառայության վերադառնալու կամ զինվորական ծառայության անցնելու հիմնական վավերապայմանը ֆիզիկական և հոգեկան առողջությունն է, որի վերաբերյալ եզրակացությունը տրվում է Ֆրանսիական զինված ուժերի բժշկական ծառայության կողմից:

Օրենսդրական ակտերի շրջանակում մատնանշման են արժանի Վետերանների և զինվորական թոշակների օրենսգիրքը, Նացիստական հետապնդումների զոհերի ճանաչման և հատուցման մասին օրենքը:

Ֆրանսիայի իշխանությունները սահմանել են ընթացակարգեր, որոնց կիրառմամբ հնարավոր է ստանալ հատուցումներ, այդ թվում՝ նաև խոշտանգման ենթարկված լինելու հիմքով: Այս գործառույթի համակարգումն իրականացնում է Վետերանների և պատերազմից տուժածների ազգային գրասենյակը: Կառույցն օժանդակություն է հատկացնում տարբեր խումբ անձանց՝ նախկինում և ներկայում զինվորական ծառայության մեջ գտնվողներին, այրիներին և որբացած անձանց, ահաբեկչությունից տուժած անձանց և այլն: Առցանց հարթակում առկա է հնարավորություն ներկայացնելու իրավիճակը՝ կցելով համապատասխան փաստաթղթեր

[41] Այս առնչությամբ հիմնական իրավական կարգավորումը Մեծ Բրիտանիայի Զինված ուժերում կրկին ծառայության անցնելու և ծառայության ժամկետը երկարացնելու 2018 թվականի կարգավորումն է:

(օրինակ՝ հիմնավորել ֆինանսական ծանր դրության առկայություն), ինչից հետո իրականացվում է ուսումնասիրություն և կայացվում որոշում[42]:

Խորվաթիայի Հանրապետության փորձը

Խորվաթիան իր հերթին ունի մի շարք ներպետական մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս երաշխավորել նախկին ռազմագերիների իրավունքները և հիմնարար ազատությունները: Խորվաթիայի Հանրապետության օրինակը քննարկելիս մատնանշման կարիք ունի այն հանգամանքը, որ քննարկվող դեպքը հարաբերականորեն նոր է, ինչը ևս մեկ փաստարկ է նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանության արդիականության վերաբերյալ[43]:

Այս առնչությամբ առանձնակի դեր և նշանակություն ունի Խորվաթ պաշտպանների և վետերանների ու նրանց ընտանիքների անդամների մասին և Քաղաքացիական պատերազմի խորվաթ մասնակիցների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների մասին օրենքները:

Նախկին ռազմագերիներին տրամադրվող առավելությունների թվում են առողջությանը, կենսաթոշակներին, զբաղվածությանը, կենցաղային պայմաններին վերաբերող առավելությունները:

Ավստրալիական Միության փորձը

Ավստրալիան ևս որդեգրել է մեխանիզմներ նախկին ռազմագերիների իրավունքների երաշխավորումն ապահովելու նպատակով: Նախկին ռազմագերիները կարող են ստանալ հատուցումներ և աջակցություն, այդ թվում՝ ֆինանսական, առողջապահական, սոցիալական ծառայություններին վերաբերող և այլն:

Նախկին ռազմագերիները, ի թիվս այլնի, կարող են տարբեր հատուցումների շահառու լինել, եթե գերության ընթացքում ենթարկվել են խոշտանգման, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի:

Ավստրալիայի իշխանությունները հիմնադրել են Հայրենադարձության բժշկական մարմինը, որը պատասխանատու է պատերազմի արդյունքում ստացված վնասվածքների հատուցման հայցերը գնահատելու համար: Այս շրջանակում են ներառված նաև նախկին ռազմագերիների դիմումները:

Նախկին ռազմագերիների գործերով քննությունները մեծապես իրականացվում են Ավստրալիայի պաշտպանության ուժերի քննության ծառայության կողմից, որը պատասխանատու է ավստրալական պաշտպանության ուժերի ներկայացուցիչների նկատմամբ կատարված արարքների քննության համար:

Թեպետ նախկին ռազմագերիները տեսականորեն կարող են վերադառնալ զինվորական ծառայության, սակայն առկա են խիստ վավերապայմաններ:

Ավստրալական օրենսդրությունը ևս չի առանձնացնում տարբեր չափանիշներ նախկին ռազմագերիների և այլ անձանց՝ զինվորական ծառայության վերադառնալու առնչությամբ: Այդ չափանիշները սահմանված են Ավստրալական պաշտպանության ուժերի 2016 թվականի կարգավորմամբ:

[42] Հղումը՝ https://www.onac-vg.fr/votre-situation:

[43] Միջազգային փորձի ուսումնասիրման համատեքստում հարկ է նշել նաև, որ այժմ Ուկրաինայում ևս մշակման փուլում են գտնվում այսօրինակ կարգավորումները:

Չափանիշների ցանկում ներառված են տարիքը, հոգեկան և ֆիզիկական առողջությունը, որակավորումը, փորձը և այլն:

Քննարկելով հնարավոր փոխհատուցումները՝ այս հարցի վերաբերյալ իրավասու մարմինը Վետերանների գործերով վարչությունն է: Հատուցումների և այլ առավելությունների ցանկը հիմնականում նախանշված է Վետերանների իրավունքների մասին 1986 թվականի ակտով: Այս առնչությամբ Ավստրալիայի իշխանությունները առանձնացրել են հարթակ, որտեղ անձինք կարող են ծանոթանալ հնարավոր նպաստներին, դրանց պայմաններին և չափին[44]:

[44]Հարթակի հղումը՝ https://www.dva.gov.au/financial-support/compensation-claims/laws-cover-claims/vea#disability-compensation-payment:

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻ ԵԶՐՈՒՅԹԸ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

«Ռազմագերի» եզրույթը, ինչպես նաև այդ եզրույթին համապատասխանող անձանց կարգավիճակը սահմանված է Ժնևի երրորդ կոնվենցիայով (1949թ.), որը վավերացվել է Հայաստանի կողմից 1993 թվականի հունիսի 7-ին: Համաձայն Ժնևի երրորդ կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝

«A. Սույն Կոնվենցիայի իմաստով ռազմագերիներ են հանդիսանում հակառակորդի իշխանության տակ ընկած անձինք, որոնք պատկանում են հետևյալ կատեգորիաներից որևէ մեկին:

1/ Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմի զինված ուժերի անձնակազմը, ինչպես նաև այդ զինված ուժերի կազմի մեջ մտնող՝ աշխարհազորային և կամավորական ջոկատների անձնակազմը:

2/ Այլ աշխարհազորայինների և կամավորական ջոկատների անձնակազմը, ներառյալ դիմադրության կազմակերպված շարժումների անձնակազմը, որոնք պատկանում են կոնֆլիկտի մեջ գտնվող կողմին և գործում են նրանց սեփական տարածքում կամ այդ տարածքից դուրս, եթե անգամ այդ տարածքն օկուպացված է, եթե այդ աշխարհազորայինները և կամավորական ջոկատները, ներառյալ դիմադրության կազմակերպված շարժումները, համապատասխանում են ներքոհիշյալ պայմաններին.

a/ ունեն ղեկավար անձ, որը պատասխանատու է իր ենթակաների համար,

b/ ունեն որոշակի և հեռվից բացահայտ երևացող տարբերանշան,

c/ բացեիբաց կրում են զենք,

d/ իրենց գործողություններում պահպանում են պատերազմի օրենքներն ու սովորույթները:

3/ Իրենց այն կառավարությանը կամ իշխանությանը ենթակա համարող կանոնավոր զինված ուժերի անձնակազմը, որոնք չեն ճանաչվել գերության մեջ պահող տերության կողմից:

4/ Այն անձինք, որոնք հետևում են զինված ուժերին, բայց դրանց կազմի մեջ անմիջականորեն մտած չեն, ինչպես օրինակ, ռազմական ինքնաթիռների անձնակազմի մեջ մտնող

քաղաքացիական անձինք, զինվորական թղթակիցները, մատակարարները, բանվորական խմբերի կամ ծառայությունների անհատական կազմը, որոնց վրա դրված է զինված ուժերի կենցաղային սպասարկումը, պայմանով, որ նրանք դրա թույլտվությունն ստացել են այն զինված ուժերից, որոնց նրանք հետևում են, որի համար այս վերջիններս պետք է տան առաջարկվող նմուշի անձը հաստատող վկայական:

5/ Առևտրական նավատորմի նավերի անձնակազմերի անդամները, ներառյալ նավապետները, նավատարները և նավի փոքրավորները, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի քաղաքացիական ավիացիայի անձնակազմերի անդամները, որոնք միջազգային իրավունքի այլ դրույթների հիման վրա չեն օգտվում առավել արտոնյալ ռեժիմից:

6/ Չօկուպացված տարածքի բնակչությունը, որը հակառակորդի մոտենալուն համեմատ տարերայնորեն իր նախաձեռնությամբ զենքի է դիմում պայքարելու ներխուժած զորքերի դեմ՝ չհասցնելով ձևավորվել որպես կանոնավոր զորք, եթե այդ բնակչությունը բացեիբաց կրում է զենք և պահպանում պատերազմի օրենքներն ու սովորույթները:

Բ. Հետևյալ անձինք կենթարկվեն նույնպիսի վարվելակերպի, ինչպես որ ռազմագերիները, սույն Կոնվենցիային համապատասխան.

1. Օկուպացված երկրի զինված ուժերին պատկանած կամ պատկանող անձինք, եթե օկուպացված տերությունը նրանց պատկանելության պատճառով անհրաժեշտ է համարում նրանց ներկալել, եթե անգամ այդ տերությունը սկզբում ազատել է նրանց այն ժամանակ, երբ ռազմական գործողություններն ընթացել են նրա կողմից օկուպացված տարածքի սահմաններից դուրս, հատկապես, երբ այդ անձինք ապարդյուն փորձել են միանալ այն զինված ուժերին, որոնց նրանք պատկանում են, և որոնք մասնակցում են ռազմական գործողություններին, կամ երբ նրանք չեն ենթարկվել ներկալելու նպատակով իրենց արված կոչին:

(...)»:

Ուստի, նախկին ռազմագերի ասելով, նկատի է առնվում այն անձանց, ովքեր իրենց կարգավիճակով համապատասխանել են Ժնևի երրորդ կոնվենցիայով սահմանված «Ռազմագերի» եզրույթին, հայտնվել են հակառակորդի իշխանության տակ և վերադարձել են Հայաստանի Հանրապետություն:

Փաստորեն, ռազմագերու կարգավիճակում կարող են հայտնվել նրանք, ովքեր մասնակցում են պատերազմներին կամ մարտական գործողություններին և/կամ հանդիսանում են զինված ուժերի անդամ: Այս առումով կարևոր է հասկանալ, թե մինչև ռազմական գործողություններին մասնակցությունն ինչ կարգավիճակ ունեն

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն, արդյոք ռազմագերի դառնալու փաստով փոփոխության է ենթարկվում նրանց իրավունքների և պարտականությունների ծավալը:

ՀՀ սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն.

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:»

ՀՀ սահմանադրության 119-րդ հոդվածի համաձայն.

«Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք»:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

«Զինված ուժերը պետական ռազմական կառույց է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմական բաղադրիչը: Այլ զորքերն են՝ ոստիկանության զորքերը, սահմանապահ զորքերը, պետական պահպանության ծառայությունը և ազգային անվտանգության հատուկ ստորաբաժանումները»:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Աշխարհազորը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է»:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ զինված ուժերի գլխավոր շտաբից, զինվորական կառավարման այլ մարմիններից, զորամիավորումներից, միավորումներից, զորատեսակներից և զորամասերից, զինվորական հաստատություններից և զինվորական այլ կազմավորումներից: Պատերազմի կամ

ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը: Զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործում է աշխարհազորը»:

Այսպիսով, պատերազմի կամ ռազմական դրության պայմաններում զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը և աշխարհազորը:

Չնայած այն բանին, որ քաղաքացիական պաշտանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը ռազմական դրության ժամանակ ընդգրկվում են զինված ուժերի կազմում՝ դրանք նախատեսված չեն բուն ռազմական գործողություններին մասնակցելու համար[45]:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

«Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող»:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն.

«Զինվորական ծառայության տեսակներն են՝

1) ժամկետային,

2) պահեստազորային,

3) զորահավաքային:

ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից:

Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում զորակոչի միջոցով կազմակերպվող ծառայությունը:

Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում պայմանագրի հիման վրա կազմակերպվող ծառայությունը:

Պահեստազորային զինվորական ծառայություն է համարվում պահեստազորի պատրաստության շրջանակներում սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում

[45]Տե՛ս՝ «Քաղաքացիական պաշպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգավորումները:

կազմակերպված վարժական հավաքների ժամանակ իրականացվող ծառայությունը:

Զորահավաքային զինվորական ծառայություն է համարվում օրենքով սահմանված դեպքերում հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի հիման վրա կազմակերպվող ծառայությունը»:

ՀՀ օրենսդրությամբ զինված ուժերի կազում անչափահաս քաղաքացիները կարող են ընդգրկվել միայն ռազմաուսումնական հաստատություն ընդունվելու միջոցով, սակայն 18 տարին չլրացած քաղաքացիները չեն կարող մասնակցել մարտական գործողությունների և անչափահասների կողմից մարտական գործողությունների մասնակցության դեպքեր չեն արձանագրվել:

Ինչ վերաբերում է պահեստազորային պատրաստության շրջանում վարժական հավաքների մասնակիցներին, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նրանք պայմանագրի հիման վրա կարող են իրականացնել մարտական հերթապահություն և մարտական գործողություններում մասնակցություն կարող են ունենալ մարտական հերթապահության ընթացքում:

Աշխարհազորայինի հավաքագրման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է: Աշխարհազորայինները զինծառայողներ չեն համարվում:

Նաև ցանկանում ենք ընդգծել, որ հասարակության շրջանում լայն տարածված «կամավորականների» հայրենիքի պաշտպանությանը մասնակցության դեպքերը կարող են և պետք է ընդգրկվեն զորահավաքային ծառայության մեջ:

ՀՀ օրենսդրությամբ պատերազմին կամ ռազմական գործողություններին մասնակցության կամավոր զինվորական ծառայության տեսակ չի նախատեսվում: Այդ հանգամանքը, սակայն, մեծ խոչընդոտ չէ, և անձը միայնակ կամ խմբով կարող է պատերազմի կամ ռազմական դրության պայմաններում սեփական նախաձեռնությամբ այցելել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն /զինկոմիսարիատ/ և հայտնել, որ ցանկանում է մասնակցել ռազմական գործողություններին, որից հետո նրա մասնակցությունը հնարավոր է նրան զորակոչելու մասին որոշում ընդունելու դեպքում:

Փաստորեն, բացի աշխարհազորայիններից, պատերազմական և ռազմական գործողությունների մասնակիցները համարվում են զինծառայողներ և օգնվում են զինծառայողների համար օրենքով սահմանված արտոնություններից և երաշխիքներից, մինչդեռ աշխարհազորայինները, անգամ ռազմական գործողությունների մասնակցության դեպքում, չեն համարվում զինծառայողներ և զրկված են զինծառայողների համար սահմանված սոցիալական երաշխիքներից, այդ թվում՝ անվճար բժշկական օգնություն ստանալու երաշխիքից: Աշխարհազորայինները, սակայն, գերի ընկնելու դեպքում ևս գտնվում են միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության ներքո և համարվում են ռազմագերի:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կախված զինծառայողի զինվորական ծառայության տեսակից, զինծառայողներն ունեն տարբեր իրավունքներ և պարտականություններ: **Ուստի, անհրաժեշտ է՝**

օրենքով սահմանել «Նախկին ռազմագերի» հասկացությունը, ինչպես նաև նախկին ռազմագերիների կարգավիճակը՝ իրավունքները և պարտականությունները, որի արդյունքում նախկին ռազմագերիները կունենան որոշակի իրավունքներ՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգավիճակ են ունեցել մինչև գերի ընկնելը:

ԳԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Անշուշտ, գերության մեջ գտնվելն ինքին չի նշանակում, որ անձը խոշտանգվել է, սակայն Ադրբեջանի կողմից ռազմագերիներին խոշտանգելն ու նրանց նկատմամբ այլ հանցագործություններ իրականացնելը ոչ թե առանձին դրսևորումներ են, այլ պետական քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետությունը պարտականություն ունի արդյունավետ քննություն իրականացնելու նախկին ռազմագերիների նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունների դեպքերով նաև այն պատճառով, որ նախկին ռազմագերիները հանդիսանում են ՀՀ քաղաքացիներ: Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ ներպետական օրենսդրությունը ևս քննություն իրականացնելու լիարժեք հնարավորություն տալիս է:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

> *«Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի համաձայն.

> *«Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքով հովանավորվող անձի կամ միջազգային իրավունքով պաշտպանությունից օգտվող այլ*

անձի հանդեպ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը,

2) առանց անձի նկատմամբ արդար դատաքննության իրականացման՝ պատիժ նշանակելը կամ կատարելը կամ

3) պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) սպանությունը,

*2) **խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը, ապօրինաբար բժշկական, կենսաբանական, գիտական կամ այլ փորձի ենթարկելը, մարմնի մաս կամ հյուսվածք հեռացնելը կամ նրանց նկատմամբ փոխպատվաստման վիրահատություն իրականացնելը,***

3) մարդու առողջությանը ծանր վնաս կամ ուժեղ տառապանք պատճառելը կամ անձի առողջական վիճակից ելնելով անձին բժշկական օգնություն տրամադրելու անհրաժեշտությամբ չպայմանավորված՝ բժշկական կամ այլ միջամտության արդյունքով ֆիզիկական խեղում պատճառելը,

4) սեքսուալ բնույթի բռնի գործողությունը, սեքսուալ ստրկացումը, պոռնկության հարկադրումը, հարկադրական հղիացումը կամ ամլացումը կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրումը,

5) ստրկացնելը,

6) պատանդ վերցնելը կամ պահելը,

7) երեխաներին զինված ուժեր զինվորական ծառայության զորակոչելը կամ հավաքագրելը կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը կամ

8) անօրինական բռնագաղթը, տեղափոխումը, բռնի անհետացումը կամ այլ ձևով ազատությունից զրկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

3. Միջազգային զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց հակառակորդ պետության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը կամ

2) ռազմական գործողություններն ավարտելուց հետո ռազմագերու կամ քաղաքացիական անձի հայրենադարձությունը խոչընդոտելը կամ չհիմնավորված ձգձգելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

4. Սույն հոդվածի իմաստով՝ հովանավորվող անձինք են համարվում՝

1) միջազգային զինված ընդհարման առնչությամբ 1949 թվականի ժնևի կոնվենցիաներով կամ Առաջին լրացուցիչ արձանագրությամբ հովանավորվող անձինք, մասնավորապես վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները, ռազմագերիները և քաղաքացիական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով զինված ընդհարման ժամանակ միջազգային պաշտպանությունից օգտվող այլ անձինք,

2) միջազգային բնույթ չկրող ընդհարման առնչությամբ վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող անձինք, որոնք գտնվում են հակառակորդի վերահսկողության ներքո,

*3) հակառակորդի զինված ուժերի անդամները կամ կոմբատանտները, որոնք վայր են դրել զենքը կամ զրկված են պաշտպանության որևէ հնարավորությունից»: (**Համանման հոդված առկա է եղել 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում՝ հոդված 390)**[46]:*

1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ՀՕ 248) 58-րդ հոդվածի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր

[46] Ընդգծումն ավելացված է մեր կողմից:

> *անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:*

Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը:

2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ՀՕ 306-Ն) 6-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝

> *«Տուժող է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն, որի վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցանքով նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում»:*

Արձանագրում ենք, որ նախկին ռազմագերիները, որոնք գերության ընթացքում խոշտանգվել կամ այլ պատերազմական հանցագործության զոհ են դարձել, պետք է քրեական վարույթի /գործի/ ընթացքում ունենան տուժողի դատավարական կարգավիճակ:

Հարկ ենք համարում նշել, որ ի թիվս այլ իրավունքների, տուժողներն ունեն նաև հանցագործությամբ իրենց պատճառված վնասի փոխհատուցման իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2013 թվականի փետրվարի 15-ի **ԵԿԴ/0077/11/12** որոշման 25-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

> *«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, **այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով:** Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը[47]»:*

Սույն զեկույցի պատրաստման շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ գլխավոր դատախազության 2020, 2021 և 2022 թվականների գործունեության մասին հաղորդումները: Դրանց ուսումնասիրությունից պարզվել է, որ բազմաթիվ քրեական գործեր են հարուցվել Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից իրականացված հանցագործությունների դեպքերի առթիվ: Այդ գործերով քննության առարկա են դարձել նաև Ադրբեջանի զինված ուժերի մոտ գտնվող ռազմագերիների և քաղաքացիական անձանց սպանության, խոշտանգելու, նրանց նկատմամբ

[47] Ընդգծումն ավելացված է մեր կողմից:

դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող բազմաթիվ դեպքեր[48]:

2021 թվականի գործունեության մասին հաղորդման ուսումնասիրությունից արձանագրել ենք, որ Ադրբեջանի ռազմաքաղաքական և զինվորական ղեկավարությունից, ինչպես նաև վարձկան գրոհայիններից և ահաբեկչական խմբավորումների ղեկավարներից որպես մեղադրյալ ներգրավվել են շուրջ 40 անձ ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով սահմանված հանցագործություններ կատարելու համար, այդ թվում՝ նախկին քրեական օրենսգրքի 390-րդ հոդվածով, սակայն հաղորդմամբ տեղեկություն ներկայացված չէ, թե ռազմագերիներին խոշտանգելու դեպքերի առթիվ քանի անձ է ներգրավվել որպես մեղադրյալ[49]:

2022 թվականի գործունեության մասին հաղորդմամբ որևէ տեղեկություն չի ներկայացվել Ադրբեջանի ռազմաքաղաքական և զինվորական ղեկավարության կողմից իրականացված պատերազմական հանցագործութունների քննության ընթացքի վերաբերյալ: Սա այն պարագայում, երբ 2022 թվականի ընթացքում ևս եղել են հայ զինծառայողների գերեվարումներ և նրանց խոշտանգման դեպքեր[50]:

Չնայած՝ այդ հաղորդումները ներկայացվում են ՀՀ ազգային ժողովին, սակայն դա հրապարակային փաստաթուղթ է, և շատ կարևոր է, որ դատախազությունն ինքը մանրամասն տեղեկություններ ներկայացնի նախկին ռազմագերիների նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունների գործերի քննության ընթացքի մասին, այդ թվում՝ նշի, թե քանի նախկին ռազմագերի է ենթարկվել խոշտանգման, քանի հանցագործի նկատմամբ է հարուցվել հանրային քրեական հետապնդում, հայտարարվել հետախուզում և այլն: Նշված տեղեկություններն օգտակար կլինեն նաև այլ պետական մարմինների համար, մասնավորապես, հստակ կլինի թե քանի նախկին ռազմագերի է ենթարկվել խոշտանգման և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ նրանց իրավունքներն ապահովելու համար:

Բացի այդ, հարցն ունի նաև հանրային նշանակություն, և դատախազությունը պարտավոր է այդ մասով թափանցիկ աշխատել և ապահովել հանրային հսկողությունը:

Տեղեկությունները պետք է ներկայացվեն հնարավորինս մանրամասն՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանած պահանջները:

Զեկույցի պատրաստման ընթացքում տեղեկություններ ստանալու նպատակով գրավոր հարցեր են ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազությանը: Դատախազությունից հայտնել են, որ քրեական վարույթների ընթացքում ՀՀ վերադարձած մի շարք գերիներ ճանաչվել են տուժող, վարույթի համար էական նշանակություն ունեցող մի շարք դեպքերում, այդ թվում՝ հայրենադարձված զինծառայողների խոշտանգված լինելու հանգամանքը պարզելու համար, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ և ստացվել դրանց եզրակացությունները:

[48] ՀՀ դատախազության 2020 թվականի գործունեության մասին հաղորդման 259-261 էջեր:
[49] ՀՀ դատախազության 2021 թվականի գործունեության մասին հաղորդման 147-148 էջեր:
[50] ՀՀ դատախազության 2021 թվականի գործունեության մասին հաղորդումը:

Մեր կողմից ներկայացված մի շարք հարցերի վերաբերյալ, սակայն, դատախազությունը պատասխաններ չի ներկայացրել՝ պատճառաբանելով, որ դրանք հանդիսանում են նախաքննական գաղտնիք:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

> *«Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է՝*
>
> *1) խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին.*
>
> *2) դառնալ հանցանքի կատարման պատճառ.*
>
> *3) վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը.*
>
> *4) հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման»:*

Դատախազությունը, սակայն, չի նշել, թե վերը նշված որ հիմքով է մեր պահանջած տեղեկությունը հրապարակման ոչ ենթակա:

Մինչդեռ մենք ներկայացրել ենք նաև հետևյալ հարցադրումները՝

1. արդյոք խոշտանգված նախկին ռազմագերիների մարմնական վնասվածքերն արձանագրվելու համար քննությունն իրականացվել է Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան,
2. արդյոք պարզվել են հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգում կամ այլ դաժանություն, այդ թվում՝ սպանություն իրականացրած Ադրբեջանի պաշտոնյաների ինքնությունը,
3. արդյոք Ադրբեջանի պաշտոնյաների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում /մեղադրյալ ներգրվելու մասին որոշում կայացվե՞լ է/,
4. արդյոք Հայաստանի Հանրապետության կողմից հայտարարվել է միջազգային հետախուզում պատերազմական հանցագործություններ կատարած, այդ թվում՝ ռազմագերիներին խոշտանգած, Ադրբեջանի իշխանությունների ներկայացուցիչների նկատմամբ, եթե այո՝ ապա քանի պաշտոնյայի /զինվորական ծառայողի/ նկատմամբ է հայտարարվել հետախուզում:

Հաշվի առնելով, որ այդ հարցադրումների վերաբերյալ պատասխաններ չեն ներկայացվել, չենք կարող հաստատել կամ հերքել, որ ՀՀ կողմից միջազգային հետախուզում հայտարարվել է գերիների նկատմամբ իրականացված հանցագործությունների համար, ինչպես նաև չենք կարող հաստատապես նշել, թե արդյոք նախկին ռազմագերիների մարմնական վնասվածքները պարզելու համար քննությունն իրականացվել է Ստամբուլյան արձանագրություններին համապատասխան, թե՞ ոչ:

Այնուամենայնիվ, գտնում ենք, որ նշված հարցադրումների վերաբերյալ պատասխանների հրապարակումը չի կարող համարվել նախաքննական գաղտնիք:

Ինքնին հասկանալի է, որ Ադրբեջանի տարածքում հայ ռազմագերիների նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունների քննությունը բավականին դժվար է, մեղավորներին Հայաստանի Հանրապետությունում պատասխանատվության ենթարկելը՝ գրեթե անհնարին, սակայն վարույթն իրականացնող մարմինն, այնուամենայնիվ, իրենից կախված ամեն ինչ պետք է անի՝ դրսևորի պատշաճ ջանասիրություն, իրականացնի արդյունավետ քննություն (effective investigation):

Հատկանշանական է, որ ՀՀ գլխավոր դատախազը 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արդյունավետ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» N 38 հրամանը: Հրամանով սահմանվել են դեպքերի արագ և թափանցիկ քննության մի շարք չափանիշներ, այդ թվում՝ մարմնական վնասվածքները հայտնաբերելու մասով:

Ուստի, անհրաժեշտ է՝

- **ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նախկին ռազմագերիների նկատմամբ գերության ընթացքում տեղի ունեցած հանցագործությունների դեպքերի արդյունավետ քննությունն ապահովելու համար սահմանել չափորոշիչներ՝ սահմանելով, որպեսզի նրանց մարմնական վնասվածքները հայտնաբելու համար քննությունն իրականացվի Ստամբուլյան արձանագրության չափորոշիչներին համապատասխան:**
- **Ապահովել, որպեզի քրեական վարույթի ընթացքում տուժողներին տրվի համապատասխան դատավարական կարգավիճակ՝ հնարավորինս սեղմ ժամկետներում,**
- **Նախկին ռազմագերիների նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունների, այդ թվում՝ խոշտանգումների գործերով իրավասու մարմինները (քննչական մարմինները և դատախազությունը) հանրությանը ներկայացնեն գործերի ընթացքի մասին տեղեկություններ, որպեսզի այդ գործերի նկատմամբ իրականացվի նաև հանրային վերահսկողություն:**

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀՀ սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝

> *«Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք»:*

ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ նախին ռազմագերիների իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, առկա չէ նաև կարգավորում՝ համաձայն որի նախկին ռազմագերիները հնարավորություն կունենային անվճար բժշկական օգնություն ստանալու: Ուստի, նախկին ռազմագերու անվճար բժշկական օգնություն ստանալը կամ չստանալը պայմանավորված է մինչև գերի ընկնելն ունեցած նրա կարգավիճակով:

Չնայած՝ օրենքով ուղղակիորեն նշված չէ, որ գերության մեջ գտնվելու ժամանակահատվածը հաշվարկվում է զինվորական ծառայության ժամանակահատվածի մեջ, սակայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանվում են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետների մեջ, որի մեջ նշված չէ գերության մեջ գնվելու ժամանակահատվածը[51]: Այսպիսով, գերության մեջ գտնվելու ժամանակահատվածը հաշվարկվում է զինվորական ծառայության ժամկետի մեջ, և այդ ընթացքում ստացած վնասվածը կամ այլ առողջական խնդիրները համարվում են ծառայության ընթացքում ձեռք բերված:

Արդյունքում՝ նախկին ռազմագերիները, ովքեր համարվում են զինծառայողներ, ունեն անվճար բժշկական օգնություն ստանալու արտոնություն:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն.

> *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում»:*

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն.

> *«Առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից»:*

[51] Տե՛ս՝ նշված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը:

Նույն օրենքի 25-րդ հոդվածի համաձայն.

> *«Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների փոխհատուցման կարգը հաստատում է կառավարությունը»:*

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 308-Ն որոշման 3-րդ կետով հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը (այսուհետ՝ նաև Ցանկ): Ցանկի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն նաև

1. հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով,
2. հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով,
3. հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով,
4. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք,
5. զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն և հիվանդանոցային փորձաքննություն).
6. **զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքների անդամներ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ,**
7. փրկարարական ծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատված փրկարարական ծառայողներ, հաշմանդամություն ձեռք բերած փրկարարական ծառայողներ, ծառայության ընթացքում զոհված (մահացած) փրկարարական ծառայողների ընտանիքների անդամներ,
8. մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք,
9. ապաստան հայցողներ ու նրանց ընտանիքների անդամներ,
10. **զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ովքեր ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձ չեն ճանաչվել** (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից կազմված ծառայությունների անհատական ծրագրի շրջանակներում),

11. զինծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, բուժման սկզբից 3 ամսվա ընթացքում, մինչև ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումը:

Ավելին, հնարավոր են իրավիճակներ, երբ զինծառայողը գերության ընթացքում ստանա վնասվածք, սակայն չճանաչվի հաշմանդամ և ծառայությունից արձակվի այլ հիմքով, որի պարագայում չի կարող անվճար բժշկական օգնությունից օգտվել վերը նշված 10-րդ կետի հիմքով:

Հատկանշական է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 308-Ն որոշման 12-րդ հավելվածով հաստատվել է նաև «Արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության եվ սպասարկման կազմակերպման կարգը» (այսուհետ նաև՝ Կարգ): Կարգի համաձայն՝ տուժած անձն օգտվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից՝ սույն որոշմամբ սահմանված ծավալներով, այդ թվում՝ սույն որոշման N 5 հավելվածով նախատեսված նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից:

Տուժած անձը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով առողջության առաջնային պահպանման ծառայություններ է ստանում իր կողմից կամավոր ընտրված բժշկի մոտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշմամբ սահմանված կարգով գրանցումից հետո:

Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով տուժած անձին տրամադրվող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանված կարգով հատկացվող դեղերի տրամադրումը:

Կարգի իմաստով տուժած անձինք են համարվում՝

1) պատերազմական գործողությունների հետևանքով տարհանված Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքացիները,

2) Արցախի Հանրապետությունում հաշվառված քաղաքացիները՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված էլեկտրոնային ուղեգրի առկայության դեպքում,

3) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում խեղում, վնասվածք, հիվանդություն ստացած անձինք՝ արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության մասով:

Բնականաբար, ողջունելի է, որ պետությունը անվճար բժշկական օգնություն է տրամադրում պատերազմի հետևանքով տուժած քաղաքացիական բնակչությանը, սակայն Կարգի իմատսով ևս նախկին ռազմագերիները տուժած անձ չեն համարվում և չեն կարող օգտվել անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

Կարգում լրացում կատարելու միջոցով, մինչդեռ, հնարավոր է ապահովել նաև նախկին ռազմագերիների անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը:

Միաժամանակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով սահմանվել է, որ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում, ինչպես նաև նույն օրենքով սահմանվում են նաև զինծառայողներին հավասարեցված անձինք, սակայն կարգավորումն ուղղակիորեն վերաբերելի չէ նախկին ռազմագերիներին:

Արձանագրում ենք, որ հնարավոր են իրավիճակներ, որ գերության ընթացքում ստացած վնասվածքի կամ այլ առողջական խնդրի առկայության դեպքում նախկին ռազմագերիները չստանան անվճար բժշկական օգնություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից ստացված տեղեկությունների համաձայն՝ նախկին ռազմագերիները մի շարք բողոքներ են ներկայացրել առողջական տարբեր խնդիրների վերաբերյալ, այդ թվում՝ հոգեկան առողջության վերաբերյալ: **Ուստի անհրաժեշտ է՝**

օրենքով սահմանել անվճար և որակյալ բժշկական օգնություն ստանալու իրավունք ողջ կյանքի համար՝ անկախ այն հանգամանքից, թե նախկին ռազմագերին հանդիսացել է զինծառայող, թե ոչ, եղել է պայմանագրային, թե՞ պարտադիր ժամկետային զինծառայող:

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ ԿՐԿԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ինչպես արդեն քննարկվեց, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պաշտպանությունից, ի թիվս այլ սուբյեկտների, օգտվում են նաև ռազմագերիները: Թեև այս առնչությամբ Ժնևի երրորդ կոնվենցիան չի պարունակում ծավալուն մեկնաբանություններ, սակայն հոդվածների համադրումները և Ժնևյան կոնվենցիաների պաշտոնական մեկնաբանությունները թույլ են տալիս արձանագրել, որ նախկին ռազմագերիների առնչությամբ ևս կիրառելի են որոշ երաշխիքային մեկնաբանություններ:

Սույն բաժնում հարկ է առանձին ուսումնասիրության ենթարկել Ժնևյան երրորդ կոնվենցիայի 117-րդ հոդվածը՝ որպես նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանությանը միտված հատուկ կարգավորում: Կարիք կա առանձին կերպով արձանագրելու, սակայն, որ այս հոդվածը նպատակ չի հետապնդում պաշտպանել բացառապես նախկին ռազմագերու իրավունքները:

Համաձայն **Ժնևի երրորդ կոնվենցիայի** 117-րդ հոդվածի՝

«Ոչ մի հայրենադարձված չի կարող օգտագործվել իսկական զինվորական ծառայության մեջ»:

Ժնևյան երրորդ կոնվենցիայի 117-րդ հոդվածը ամփոփիչ հոդվածն է կոնվենցիոն կարգավորման այն բաժնի, որը վերաբերում է հայրենադարձված անձանց: Համաձայն Կոնվենցիայի մեկնաբանության՝ Ժնևյան երրորդ կոնվենցիայի հիմքում ընկած է այն հիմնարար գաղափարը, որ ակտիվ ռազմական գործողությունների ընթացքում ռազմագերիները կարող են լինել ներկալված: Երբ հակառակորդ բանակի ներկայացուցիչը հայտնվում է մյուս կողմի ներկայացուցիչների ազդեցության գոտում, նրանց ներկալումը կարելի է արդարացնել ռազմական անհրաժեշտությամբ՝ այսպիսով ապահովելով, որ այդ անձինք այլևս չեն մասնակցի զինված գործողություններին: Այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիան խրախուսում է ռազմագերիների հայրենադարձումն անգամ ռազմական գործողությունների ընթացքում (և ոչ անպայմանորեն դրանց ավարտից հետո), այս կարգավորումը որոշակի պաշտպանիչ մեխանիզմ է նաև ներկալող պետության համար: Մասնավորապես՝ ներկալող պետությունը վստահ է, որ մարտի դաշտում նույն անձի դեմ այլևս չի մարտնչելու:

Հատկանշական է, որ այս կարգավորումն իր տեղն է ունեցել նաև 1864 թվականի Ժնևի կոնվենցիայում: Այս կարգավորման ներառումը 1949 թվականի Կոնվենցիայում ևս չի վիճարկվել: Այնուամենայնիվ, որոշ քննարկումների և վեճերի տեղիք է տվել **«իսկական զինվորական ծառայություն»** եզրույթը:

117-րդ հոդվածի շրջանակում հաջորդ քննարկման առարկան հանդիսացել է հանգամանքը, որ այն վերաբերում է նաև գործունակ ռազմագերիներին: Այս խմբի ռազմագերիների նկատմամբ քննարկվող հոդվածի կիրառելիությունն արդարացված է, քանի որ նրանց պարագայում առավել մեծ է հավանականությունը, որ հայրենադարձվելուց հետո նրանք կվերադառնան մասնակցելու ակտիվ ռազմական գործողություններին (ի տարբերություն վիրավորում ստացած զինծառայողների):

Ընդհանրացնելով՝ կարելի է պնդել, որ «իսկական զինվորական ծառայությունը» կարելի է մեկնաբանել որպես ուղղակի կամ անուղղակի մասնակցություն զինված գործողություններին՝ ընդդեմ ներկալող պետության կամ նրա դաշնակիցների[52]: Սա նշանակում է, որ հայրենադարձված անձինք չեն կարող կոչվել ծառայելու զինված ուժերի մաս կազմող ստորաբաժանումներում, սակայն 117-րդ հոդվածը չի խոչընդոտում նրանց ընդգրկվելը բժշկական կամ կրոնական գործերում, անզեն զորամասերում, որոնք զբաղված են բացառապես օժանդակ, լրացուցիչ կամ համանման աշխատանքներով[53]:

117-րդ հոդվածի կարևորությունն արդի ժամանակաշրջանում տեղի ունեցող զինված ընդհարումների համատեքստում էլ ավելի է ընդգծվել: Մասնավորապես՝ ի տարբերություն նախկին ժամանակների, երբ իսկական զինվորական ծառայությանը մասնակցելը ենթադրում էր անմիջական, ֆիզիկական մասնակցություն մարտի դաշտում, այժմ տեխնոլոգիական

[52] Commentary on the Third Geneva Convention, ICRC, 1960, էջ. 539.

[53] Law of War Manual, 2016, էջ. 653, պարագրաֆ 9.36.7.2, Միացյալ Թագավորություն, Manual of the Law of Armed Conflict, 2004, էջեր 200–201, պարագրաֆ 8.155, Joint Doctrine Captured Persons, 2015, էջ 12-18, պարագրաֆ 1245:

առաջընթացի արդյունքում առկա են մի շարք զինատեսակներ և այլ օբյեկտներ, որոնք մասնակցում են զինված գործողություններին, և դրանց կառավարելն ամենևին չի ենթադրում անձի գտնվելը մարտի դաշտում: Այսինքն՝ մի շարք ռազմական միջոցներ գործարկվում են հեռավորության վրա: Սա առավել մեծացնում է հայրենադարձված անձանց զինված գործողություններին կրկին մասնակից դարձնելու վտանգը[54]:

Հարկ է քննարկել նաև ժամանակային սահմանափակումը, որը նկատի ունի Ժնևյան երրորդ կոնվենցիայի 117-րդ հոդվածը: Այս կարգավորման ընդունելի մեկնաբանությունն այն է, որ նախկին ռազմագերիները (հայրենադարձվածները) չեն կարող վերադառնալ իսկական զինվորական ծառայության այն զինված ընդհարման շրջանակում (միջազգային կամ ոչ միջազգային), որի ընթացքում գերի են ընկել: Այդ զինված ընդհարումի ավարտից հետո սահմանափակումն այլևս չի գործում[55]:

Քննարկելով Ժնևյան երրորդ կոնվենցիայի 117-րդ հոդվածի խախտումները՝ պետք է նկատել, որ տեսական գրականությամբ ընդունված մոտեցումը հանգում է նրան, որ այս դրույթը չի կարող խախտվել նախկին ռազմագերու կողմից: Խախտման համար պատասխանատու է բացառապես պետությունը[56]: Այս կարգավորումն ունի գործնական կարևորություն երկու տեսանկյունից: Մասնավորապես՝ հնարավոր է դեպք, երբ հայրենադարձված անձը կրկին վերադառնա իսկական զինվորական գործողությունների տիրույթ, քանի որ զորակոչվել է իր պետության կողմից: Այս դեպքում, կրկին գերության մեջ հայտնվելու պարագայում, վերջինս, միևնույնն է, պետք է օգտվի ռազմագերիներին տրամադրվող բոլոր երաշխիքներից, քանի որ մարտի դաշտ վերադառնալու պարտականությունը և կոնվենցիոն խախտումը թույլ է տվել ոչ թե անձը, այլ պետությունը: Գործնական կարևորության երկրորդ դրվագը երաշխավորում է կրկին գերության մեջ հայտնված անձանց քրեական հետապնդման ենթարկվելուց ազատվելը: Քանի որ, կրկին, մասնավոր անձը չէ, որ խախտել է կոնվենցիոն դրույթը:

Քննարկելով Հայաստանի Հանրապետություն վերադարձած նախկին ռազմագերիներին զինվորական ծառայության վերադարձելու հարցը՝ անպայման անհրաժեշտ է հաշվի առնել, որ գերության ընթացքում լրջորեն վտանգվում է զինծառայողների առողջությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ թեև պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ, զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին: Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ, առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր չառաջացնել, մինչդեռ այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի

[54] Convention (III) relative to the Treatment of Prisoners of War. Geneva, 12 August 1949, Commentary of 2020, պարագրաֆ 4424:
[55] Նույն վայրում, պարագրաֆ 4425:
[56] Նույն վայրում, պարագրաֆ 4427, Maurice Bretonnière, L'application de la Convention de Genève aux prisonniers français en Allemagne durant la seconde guerre mondiale (typewritten thesis), 1949, էջ 464:

բավարար ֆիզիկական տոկունություն: Հետևաբար, հաշվի առնելով զինվորական ծառայության պահանջները, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի[57]:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ **քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ, իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն**:

Բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները: Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են.

1) պիտանի է զինվորական ծառայության համար,
2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,
4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,
5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,
6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
7) կարիք ունի բուժման,
8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի,
9) ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

Փաստորեն, օրենքով ամրագրված չէ, որ գերությունից վերադառնալուց հետո զինծառայողը պետք է անցի առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն: **Կարծում ենք, որ օրենքով անհրաժեշտ է ամրագրել, որ գերությունից վերադառնալուց հետո զինծառայողը պետք է առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն անցնի՝ անկախ այն հանգամանքից, արդյո՞ք գերության ընթացքում ենթարկվել է խոշտանգման, թե ոչ, անկախ՝ նաեւ առողջական վիճակի վերաբերյալ բողոքներ ունենալու կամ չունենալու հանգամանքից:**

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանվել են քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական

[57] Տե՛ս՝ Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի գործով (Kayankin v. Russia) 2010 թվականի մայիսի 11-ի վճիռը, գանգատ՝ թիվ 24427/02, կետ 87

փորձաքննության կարգը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները, դրանց գործունեության, ինչպես նաև հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, փորձաքննության եզրակացությունների ձևերը՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ նաև՝ Հավելված 1):

Հավելված 1-ով սահմանվել են զինապարտների փորձաքննությունների կարգերը (զինվորական հաշվառման վերցնելիս, զորակոչելիս, պայմանագրային ծառայության անցնելիս, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելիս և այլն): Սահմանված կարգավորումները հանգում են նրան, որ դատաբժշկական կամ ռազմադատաբժշկական փորձաքննությունների արդյունքները հիմք չեն ընդունվում զինապարտների կամ նախկին զինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար:

Արդյունքում, եթե անգամ նախկին ռազմագերիները քրեական վարույթի շրջանակներում, ունենալով տուժողի կարգավիճակ, անցած լինեն դատաբժշկական փորձաքննություն՝ դա հաշվի չի առնվում նրանց առողջական վիճակի վերաբերյալ տրվող եզրակացություններում:

Հավելված 1-ի համաձայն՝ ՀՀ ՊՆ Կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի (ԿՌԲՓԿ) գործառույթներից է նաև զինծառայողների հիվանդությունների և վնասվածքների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ որոշման կայացումը (համաձայն N 7 ձևի):

Միաժամանակ նշվում է, որ զինծառայողների հիվանդությունների կամ վնասվածքների՝ զինծառայության հետ պատճառական կապի տրամադրման կարգի դրույթները տարածվում են՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի պարտադիր ու պայմանագրային ծառայության զինծառայողների վրա,

2) **Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների վրա,**

3) պահեստազորի վարժական հավաքների և զորահավաքների մասնակիցների վրա՝ դրանց ընթացքում ձեռք բերած հիվանդությունների կամ ստացած վնասվածքների դեպքերում:

ԿՌԲՓԿ-ն զինվորական ծառայության հետ պատճառական կապը սահմանելիս տալիս է հետևյալ եզրակացությունները.

1) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է զինվորական ծառայության ընթացքում,

2) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է զինվորական պարտականությունները կատարելու հետևանքով,

3) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ,

4) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների (խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների) ժամանակ,

5) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է վարժական հավաքներին մասնակցելու ժամանակ,

6) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք

կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով,

7) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքն ստացել է Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքների ժամանակ զինվորական ծառայողական պարտականությունները կատարելիս:

Նախկին ռազմագերիների վերաբերյալ լրացուցիչ սահմանված է միայն հետևյալ կարգավորումը.

> *«114. Գերության մեջ գտնված նախկին զինծառայողների հիվանդությունների կամ վնասվածքների առկայության հետ պատճառական կապը որոշելու համար ԿՌԲՓԿ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.*
>
> *1) տեղեկանք զինվորական կոմիսարիատից, որտեղ նշվում են զինված ուժեր զորակոչվելու և զորացրվելու տարեթվերը, ամիսներն ու ամսաթվերը, գերության մեջ գտնվելու ժամանակահատվածը, զինվորական վերահաշվառում անցնելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը կամ նրա պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ զինված ուժերից զորացրվելու պահին,*
>
> *2) հիվանդությունը կամ վնասվածքը հավաստող փաստաթուղթ առողջապահական կազմակերպությունից»:*

Կարծում ենք, որ նախկին ռազմագերիների ստացած մարմնական վնասվածքները ճշգրիտ ուսումնասիրելու և հայտնաբերելու համար նրանց փորձաքննությունը պետք է իրականացվի Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված չափորոշիչների համաձայն:

Այդ նպատակով կարող են անցկացվել նաև համապատասխան մասնագետների վերապատրաստումներ:

Բացի այդ, կարծում ենք, որ անհրաժեշտ է նաև սահմանել եզրակացության տեսակ, որի համաձայն հնարավոր կլինի նշել, որ հիվանդությունը կամ վնասվածը ձեռք է բերվել գերության ընթացքում:

Սույն զեկույցի պատրաստման շրջանակներում հարցումներ են ուղարկվել ՀՀ պաշտպանության նախարարություն և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ: Ստացված տեղեկությունների համաձայն՝ նախկին ռազմագերիների առողջական վիճակի փորձաքննություն իրականացվում է ՀՀ ՊՆ ռազմաբժշկական փորձաքննության կենտրոնի կողմից՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և թիվ 405-Ն որոշումների (2022 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2053-Ն և 2016-Ն փոփոխություններով) համաձայն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ գերությունից վերադարձածին հետազոտության և փորձաքննության նպատակով Երևանի կայազորային զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում պահելու, կրկին զինվորական ծառայության մեջ

ներգրավելու, մարտական հերթապահության մեջ ընդգրկելու և այլ հարցերի մասին:

2022 թվականի սեպտեմբերի 13-ից 14-ը տեղի ունեցած ռազմական գործողությունների պատճառով վերադարձած 17 նախկին ռազմագերիներից 14-ն արձակվել են զինված ուժերից առողջական վիճակի պատճառով:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ նախկին ռազմագերիներին զինվորական ծառայության ներգրավելու պարագայում ծառայության բնույթը չպետք է լինի այնպիսին, որ նրանք մասնակցեն նույն պետության դեմ ռազմական գործողություններին, որի կողմից գերեվարվել են նախկինում, ինչպես նաև անհրաժեշտ է մանրակրկիտ հետազոտությամբ վեր հանել նրանց առողջական խնդիրները, ապահովել, որպեսզի զինվորական ծառայությունը որևէ բացասական հեռանք չունենա զինծառայողների առողջության վրա:

Գործող իրավակարգավորումների պայմաններում անհրաժեշտ է քննարկել նաև նախկին ռազմագերիներին վարժական հավաքներին ներգրավելու հարցը:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարժական հավաքներ անցկացվում են պահեստազորի առաջին խմբում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունները կատարելագործելու և նրանց վերապատրաստելու, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մարտական հերթապահության մեջ ներգրավելու նպատակով: ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1174-Ն որոշմամբ հաստատվել է «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը» (այսուհետ նաև՝ Կարգ): Դրա 6-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վարժական հավաքների նպատակներից է ռազմաուսուցված պահեստազորայիններին, կնքված պայմանագրի համաձայն, ըստ անհրաժեշտության մարտական հերթապահությունում ներգրավումը:

Միաժամանակ, նախկին ռազմագերիներն ազատված չեն վարժական հավաքներին մասնակցելու պարտականությունից: Արդյունքում, վարժական հավաքի մասնակից նախկին ռազմագերին կարող է պայմանագիր կնքելու միջոցով իրականացնել մարտական հերթապահություն, որն իհարկե ռազմական գործողությունների մասնակցություն չի, սակայն կարող է կրկին գերեվարվելու վտանգ առաջացնել:

Բացի այդ, զինծառայողներին կրկին ծառայության ներգրավելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ հանգամանքներ, մասնավորապես այն, որ գերության մեջ գտնվելու ընթացքում նախկին ռազմագերիները կարող են գործադրված դաժանությունների կամ այլ գործողությունների հետևանքով թշնամի պետության կողմից համագործակցության առաջարկ ընդունած լինեն:

ՀՀ դատախազության կողմից տեղեկատվություն է տարածվել, որ զինծառայողը, գտնվելով գերության մեջ Բաքվի բանտերից մեկում, օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցելու գրավոր համաձայնագիր է ստորագրել և Հայաստան վերադառնալուց հետո 20 հազար

ԱՄՆ դոլարի դիմաց նրանց պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ է փոխանցել[58]:

Կոնկրետ դեպքում չենք կարող հաստատված հարմարել անձի մեղքը, քանի դեռ չկա դատարանի որոշում /վերդիկտ/: Նման երևույթները, սակայն, չեն կարող բացառվել, և պետության պարտականությունն է մանրամասն ստուգել, ապա միայն նախկին ռազմագերուն ընդգրկել զինվորական ծառայության մեջ:

Առաջարկություններ

Սույն վերլուծությունը հիմք է տալիս հանդես գալու հետևյալ առաջարկություններով.

- Օրենքով սահմանել «Նախկին ռազմագերի» հասկացությունը, ինչպես նաև նախկին ռազմագերիների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները,
- Օրենքով սահմանել անվճար և որակյալ բժշկական օգնություն ստանալու իրավունք ողջ կյանքի համար՝ անկախ այն հանգամանքից, նախկին ռազմագերին հանդիսացե՞լ է զինծառայող, թե ոչ, եղել է պայմանագրային, թե պարտադիր ժամկետային զինծառայող,
- Օրենքով ամրագրել, որ գերությունից վերադառնալուց հետո զինծառայողները պետք է պարտադիր անցնեն առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն,
- Նախկին ռազմագերիների առողջական վիճակի հետազոտությունը և բժշկական փորձաքննությունը Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան իրականացնելու նպատակով ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր կամ փոփոխություններ և լրացումներ կատարել արդեն իսկ գործող իրավական ակտերում,
- Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել, որպեսզի ստացած վնասվածքի կամ հիվանդության պատճառական կապը որոշելիս հնարավոր լինի նշել, որ այն ստացվել է գերության ընթացքում,
- Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով ապահովել, որ զինապարտների (այդ թվում՝ նախկին ռազմագերիների) առողջական վիճակի վերաբերյալ տրվող եզրակացություններում հաշվի առնվեն դատաբժշկական և դատառազմաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները,
- Նախկին ռազմագերիների առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննությունները Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված չափանիշների համապատասխան իրականացնելու համար

[58]Հղումը՝ https://www.azatutyun.am/a/32306330.html?fbclid=IwAR1lV9qnha7iD618vNsSvYRdDDXdOTQdT781gE7KheqUZ7q5N7lqRrdfM_I

կազմակերպել համապատասխան մասնագետների վերապատրաստումներ,

- Իրավական ակտերով ամրագրել այն սահմանափակումները, որոնք գործելու են նախկին ռազմագերիներին կրկին զինվորական ծառայության ընդգրկելու դեպքում (այդ թվում՝ մարտական հերթապահության մեջ և ռազմական գործողություններում ընդգրկելու արգելքը),
- Օրենքով սահմանել, որ նախկին ռազմագերիները վարժական հավաքների ընթացքում չեն կարող ընդգրկվել մարտական հերթապահության,
- Օրենքով ամրագրել, որ նախկին ռազմագերիները Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո պարտավոր են սեղմ ժամկետներում իրավասու մարմիններին մանրամասն տեղեկություններ տրամադրել գերության ընթացքում գերեվարող պետության ներկայացուցիչներին հայտնած տեղեկությունների, ինչպես նաև առկա պայմանավորվածությունների (այդ թվում՝ համագործակցության) մասին: Սահմանել, որ գերության ընթացքում գերեվարող պետության ներկայացուցիչներին ցանկացած բնույթի տեղեկություններ հայտնելու համար (այդ թվում՝ պետական, ծառայողական կամ ռազմական գաղտնիք) նախկին ռազմագերիներն ազատվում են քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին սեղմ ժամկետներում հայտնում են ՀՀ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին՝ վերադառնալուց անմիջապես հետո, և եթե դրա արդյունքում ՀՀ-ն չի ունեցել մարդկային և/կամ տարածքային կորուստներ: